ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 26» հունվարի 2018թ. **N 19 - Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻԴԱ-ՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 53 արձանագրային որոշման 10-րդ կետի հավելվածի՝ 2018 թվականի միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների հայեցակարգից բխող 2018 թվականի միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Նախարարի տեղակալներին՝ ապահովել Ծրագրում ներառված միջոցառումների իրականացումը:

3. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին՝ մինչև 2018 թվականի ապրիլի, հուլիսի, հոկտեմբերի 5-ը և դեկտեմբերի 10-ը նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն ներկայացնել

հաշվետվություն՝ Ծրագրում ներառված միջոցառումների կատարման ընթացքի մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի հունվարի 31-ի N 10-Ա հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված կարգի N 2 ձևի:

4. Նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության պետ Հ. Ծպնեցյանին՝ ամփոփել սույն հրամանի 3-րդ կետով նախատեսված՝ աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից ստացված հաշվետվությունները և մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ամփոփ հաշվետվությունը Հրամանով սահմանված ընթացակարգով ներկայացնել հաստատման:

5. Սույն հրամանի 3-րդ և 4-րդ կետերի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարության աշխատակազմի ղեկավարին:

6. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2018 թվականի -ի
N ... հրամանի

ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

h/h	Միջոցառման անվանումը	Նպատակը (խնդիրը)	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթագրություն
			ոլորտը համակարգող	կատարողներ	կատարողների ղեկավարներ	համակատարողներ		
1	2	3	4	5	6	7	8	9
1	Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացման ծրագրի իրականացում	Հայաստանի Հանրապետությունում սերմնաբուծական կազմակերպությունների արտադրական կարողությունների հզորացում, հանրապետության տարածքում արտադրվող բարձր վերարտադրության աշնանացան ցորենի, հնդկացորենի, ոլոռի, ոսպի ու սիսեռի սերմնանյութի արտադրական ծավալների ավելացում և տեղական արտադրության սերմնանյութով ինքնաբավության մակարդակի բարձրացում, այդ մշակաբույսերի սորտային կազմի հարստացում, մշակության արդյունավետության բարձրացում և գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում	Աշոտ Հարությունյան Ռոբերտ Մակարյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն Գիտական և գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համակարգման բաժնի պետ «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ «Բանջարաբոստանային եվ տեխնիկական մշակաբույսերի	Ռ.Նազարյան Մ.Աթոյան Ա.Ղուկասյան Գ.Սարգսյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ մարզպետարաններ	2018թ. ընթացքում	

հ/հ	Միջոցառման անվանումը	Նպատակը (խնդիրը)	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթագրություն
			ոլորտը համակարգող	կատարողներ	կատարողների ղեկավարներ	համակատարողներ		
1	2	3	4	5	6	7	8	9
				գիտական կենտրոն» ՊՈԱԿ «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ	Ռ.Կարախանյան Վ.Մանուկյան			
2	Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում	Գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ստեղծում, արտադրության ինտենսիվացման մակարդակի բարձրացում, տնտեսությունների խոշորացում, արտադրության արդյունավետության բարձրացում, վարկառուների ռեեստրի վարման և դրա տվյալների վերլուծության միջոցով վարկավորման առաջնահերթ խնդիրների բացահայտում, արդյունքում վարկավորման նախընտրելի ուղղությունների և մեխանիզմների առաջադրում: Ծրագրի շրջանակներում վարկերը սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների տնտեսավարողներին և գյուղատնտեսական կոոպերատիվներին կտրամադրվեն 3 %, իսկ այլ	Ռոբերտ Մակարյան Արտաշես Կիրակոսյան	Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ	Հ.Ծպնեցյան Կ.Ավետիսյան Գ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի գյուղական ֆինանսավորման կառույց ֆինանսական կառույցներ (համաձայնությամբ)	2018թ. ընթացքում	

հ/հ	Միջոցառման անվանումը	Նպատակը (խնդիրը)	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթագրություն
			ոլորտը համակարգող	կատարողներ	կատարողների ղեկավարներ	համակատարողներ		
1	2	3	4	5	6	7	8	9
		համայնքների տնտեսավարողներին՝ 5% տոկոսադրույքով:						
3	Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի իրականացում	Կստեղծվեն նախադրյալներ մատչելի մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսությունում տնտեսավարողների գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ վճարունակ պահանջարկի բավարարման՝ գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի որոշակի նորացման համար: Տարեկան կնորացվի գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի շուրջ 2%-ը, որը կկազմի շուրջ 225 միավոր տրակտոր, 10 միավոր կոմբայն և շուրջ 275 միավոր այլ գյուղատնտեսական տեխնիկա:	Ռոբերտ Մակարյան Արտաշես Կիրակոսյան	Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչություն Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն	Հ.Ծպնեցյան Վ.Ղուշչյան Կ.Ավետիսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի գյուղական ֆինանսավորման կառույց ֆինանսական կառույցներ (համաձայնությամբ)	2018թ. ընթացքում	
4	4.Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում	Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում, արդյունքում՝ ինտենսիվ այգիների տարածքների ընդլայնում, արտադրանքի մրցունակության բարձրացում, արտահանման ծավալների ավելացում:	Աշոտ Հարությունյան Արտաշես Կիրակոսյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման	Ռ.Նազարյան Կ.Ավետիսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ»	2018թ. ընթացքում	

հ/հ	Միջոցառման անվանումը	Նպատակը (խնդիրը)	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթագրություն
			ոլորտը համակարգող	կատարողներ	կատարողների ղեկավարներ	համակատարողներ		
1	2	3	4	5	6	7	8	9
				վարչություն		ՊՀ-ի գյուղական ֆինանսավորման կառույց ֆինանսական կառույցներ (համաձայնությամբ)		
5	5.Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում	Կապահովվի գնված գյուղատնտեսական մթերքների դիմաց գյուղացիական տնտեսություններին ժամանակին վճարումների կատարումը, կբարձրանա գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրան-քի մրցունակության մակարդակը, որի արդյունքում կավելանան գյու-ղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրանքի արտադրության ու արտահանման ծավալները, կաճի հանրապետության մշակող արդյունաբերության ծավալում ագրովերամշակման արտադրանքի մասնաբաժինը:	Ռոբերտ Մակարյան Արտաշես Կիրակոսյան	Ագրովերամշակման զարգացման վարչություն Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն	Գ.Ղազարյան Կ.Ավետիսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի գյուղական ֆինանսավորման կառույց ֆինանսական կառույցներ (համաձայնությամբ)	2018թ. ընթացքում	
6	6.Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդա-	Պայմաններ կստեղծվեն հանրապետության գյուղատնտեսությունում կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման և շահագործման համար, արդյունքում՝ շահառու տնտե-	Աշոտ Հարությունյան Արտաշես Կիրակոսյան	Հողերի օգտագործման և մելիորացիայի վարչություն	Ա. Բաղդասարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսա-	2018թ. ընթացքում	

հ/հ	Միջոցառման անվանումը	Նպատակը (խնդիրը)	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթագրություն
			ոլորտը համակարգող	կատարողներ	կատարողների ղեկավարներ	համակատարողներ		
1	2	3	4	5	6	7	8	9
	վորման ծրագրի իրականացում	սություններում կապահովվի ջրի հավասարաչափ բաշխում և ջրի շուրջ 40 %-ով տնտեսում, բերքատվության աճ, բարդ ռելիեֆ ունեցող հողատարածքների ոռոգման հնարավորություն, ոռոգման կազմակերպման աշխատանքային ծախսերի զգալի կրճատում: Ծրագրի իրականացումը կնպաստի նաև խախտված հողատեսքերի՝ գյուղատնտեսության մեջ ներգրավմանը:		Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն	Կ.Ավետիսյան	կան զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի գյուղական ֆինանսավորման կառույց ֆինանսական կառույցներ (համաձայնությամբ)		
7	7. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում	Ծրագրի իրականացման արդյունքում՝ նախադրյալներ կստեղծվեն մատչելի մեխանիզմների կիրառմամբ խաղողի ու պտղատու այգիների և այլ տնտեսություններում հակակարկտային ցանցերի ներդրման համար, հանրապետության այգիների շուրջ 2.0 %-ը կպատվի կարկտապաշտպան ցանցաշերտերով, հակակարկտային ցանցեր կիրառած տնտեսավարողների մոտ գրեթե կբացառվի կարկուտի ռիսկը, կբարձրանա ապահովագրության համար գրավչությունը, կբարելավվի բերքի որակը, կավելանա տնտեսավարողների եկամուտները, նախադրյալներ կստեղծվեն ընդլայնված ծավալներով ծրագրի իրականացման համար: Հակակարկ-	Աշոտ Հարությունյան Արտաշես Կիրակոսյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն	Ռ.Նազարյան Կ.Ավետիսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի գյուղական ֆինանսավորման կառույց ֆինանսական կառույցներ (համաձայնությամբ)	2018թ. ընթացքում	

h/h	Միջոցառման անվանումը	Նպատակը (խնդիրը)	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթագրություն
			ոլորտը համակարգող	կատարողներ	կատարողների ղեկավարներ	համակատարողներ		
1	2	3	4	5	6	7	8	9
		տային ցանցերով պաշտպանված այգիներում կարկտահարությունից պաշտպանվածությունը կազմում է շուրջ 100 %:						
8	8.Պետական աջակցությամբ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացում	Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի մշակված մեխանիզմների փորձարկում, մեխանիզմների կատարելագործման համար նախադրյալների ստեղծում: Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման հիմնական ծրագրի իրականացման համար նախադրյալների ստեղծում:	Ռոբերտ Մակարյան Արմեն Հարությունյան Արտաշես Կիրակոսյան	Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն Գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչություն	Հ.Ծպնեցյան Ռ.Նազարյան Կ. Ավետիսյան Խ. Աբաջյան	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) Ապահովագրական ընկերություններ (համաձայնությամբ)	2018թ. ընթացքում	